ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱԶԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱԶԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ2/1089/02/24**

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024 թվականի փետրվարի <<23>>-ին (ք. Երևան)

Ծանոթանալով <<Յունիքիմ>> ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02242529, պետական գրանցման համարը՝ 269.110.03375,գործունեության *հասցե՝ ՀՀ, ք. Երևան,* ԱՐԱԲԿԻՐ, ՀՐ.

ՔՈՉԱՐ Փ., շենք 147/1, 33 *այսուհետ նաև՝ Հայցվոր*) ընդդեմ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ–ի *(ՀՎՀՀ՝* 04401874*, պետական գրանցման համար՝* 83.120.00035*, հասցե՝* ՀՀ, ԱՐՄԱՎԻՐ, համայնք ՄԵԾԱՄՈՐ, ՄԵԾԱՄՈՐ, ՄԵԾԱՄՈՐ, օբյեկտ 0, 00*)*, ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ «Քրիստինա Պետրոսյան Ավետիքի» Ա/Ձ–ի *(ՀՎՀՀ՝* 83955224*, պետական գրանցման համար՝* 264.845676*, հասցե՝* ՀՀ, ԿՈՏԱՅՔ, համայնք ՋՐՎԵԺ, ՋՐՎԵԺ, ՄԱՅԱԿ ԹԱՂ., օբյեկտ 0, 00*)* ՝ 29.01.2024թ. գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 10-րդ կետը և որպես հետևանք 02.02.2024թ. գնահատող հանձնաժողովի թիվ 3.1 արձանագրության 6-րդ կետի 1-ին և 3-րդ պարբերությունները և 9-րդ կետը անվավեր ճանաչելու և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-56/23 ծածկագրով գնանշման հարցման շրջանակում որոշում կայացնել «Քրիստինա Պետրոսյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտն անբարար ճանաչելու և «Յունիքիմ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին պարտավորեցնելու պահանջների մասին հայցադիմումին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցվոր <<Յունիքիմ>> ՍՊ ընկերության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ պատասխանող «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ–ի, ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ «Քրիստինա Պետրոսյան Ավետիքի» Ա/Ձ–ի ՝ 29.01.2024թ. գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 10-րդ կետը և որպես հետևանք 02.02.2024թ. գնահատող հանձնաժողովի թիվ 3.1 արձանագրության 6-րդ կետի 1-ին և 3-րդ պարբերությունները և 9-րդ կետը անվավեր ճանաչելու և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-56/23 ծածկագրով գնանշման հարցման շրջանակում որոշում կայացնել «Քրիստինա Պետրոսյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտն անբարար ճանաչելու և «Յունիքիմ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին:

Հայցադիմումը և կից փաստաթղթերը դատավոր Ա. Աթանեսյանին էլեկտրոնային համակարգի միջոցով մակագրվել է 12.02.2024 թվականին:

Դատարանի 15.02.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցվորի ներկայացուցիչը էլեկտրոնային համակարգում կրկին ներկայացրել է հայցադիմումը և կից փաստաթղթերը:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան և 127-րդ հոդվածի 4-րդ մասի պահպանմամբ, իսկ այն դատարան կրկին ներկայացված լինելու հիմքով հայցադիմումը պետք է համարել առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ **12.02.2024 թվականին**:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 234.5-րդ հոդվածի 2-րդ, 234.9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածների պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց և <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

3. Թիվ ԵԴ2/1089/02/24 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակել ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում՝ 2024 թվականի մարտի 25-ին:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Digitally signed by
ATANESYAN ANI 5101901431
Date: 2024.02.26 14:26:15
AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նոտարական գրասենյակում կամ էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝
cabinet.arbitrex.am